ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

04.11.2014 18:08

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ նոյեմբերի 4-ին, ավարտվել են ***Փաստաբանական դպրոցի աշնանային հոսքի շրջանավարտների որակավորման քննությունները:***
Շրջանավարտներն ըստ սահմանված կարգի պետք է երեք քննություններ հանձնեին՝

Ա. *Ըստ քաղաքացիական ուղղվածության*՝ 1. դենոթոլոգիայից (փաստաբանի վարքագծի կանոնագիրք) 4 խնդիր, 2. Հայցադիմումի կազմում և 3. Վճռի դեմ վերաքննիչ բողոքի կազմում:

Բ. *Ըստ քրեական ուղղվածության*՝ 1. դենոթոլոգիայից (փաստաբանի վարքագծի կանոնագիրք) 4 խնդիր, 2. միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքի կազմում և 3. դատավճռի դեմ վերաքննիչ բողոքի կազմում:

Ունկնդիրները վիճակահանությամբ ընտրել են իրենց աշխատատեղերը, որից հետո փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ Արա Ջոհրաբյանն ունկնդիրների ներկայությամբ ծածկագրերը տեղաբաշխել է ունկնդիրների միջև, տպել է դրանք և տեղադրել կապարակնքված արկղի մեջ՝ կրիչի հետ միասին:

Ունկնդիրներն իրենց կազմից երեք անդամ են ընտրել, ովքեր վիճակահանությամբ տարբեր խնդիրներ պարունակող տարաներից ընտրել են 3-ական խնդիր (2-ը՝ քաղաքացիական գործով, իսկ 1-ը՝ քրեական գործով):
Այնուհետև, համակարգիչներով սկսել են աշխատել: Աշխատանքը կատարելու համար տրվել է 6 ժամ: Ունկնդիրներին բացի խմելու ջրից տրամադրվել է նաև սնունդ:

Աշխատանքն ավարտելուց հետո ունկնդիրն այն տպել է 2 օրինակից, որից մեկ օրինակի վրա ամրացվել է շտրիխ կոդ պարունակող ինքնակչպուն թերթիկ, ինչից հնարավոր չէ նույնականացնել հեղինակին, իսկ աշխատանքի 2-րդ օրինակի վրա յուրաքանչյուր ունկնդիր գրել է իր անուն, ազգանունը, ստորագրել այն տեղադրել է կապարակնքված արկղի մեջ:

Հիշեցնենք, որ ծածկագրերը և աշխատանքների երկրորդ օրինակները պարունակող արկղերը բացվելու են միայն քննության արդյունքները հրապարակելուց հետո:

Աշխատանքների գնահատումը կատարվելու է որակավորման հանձնաժողովի սահմանած գնահատման չափանիշներով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի մամուլի ծառայություն

Առաջարկվող նորություններ

20.05.2014ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2014թ.ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })